


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 8 ՄՅՃ.
Պաշտպան 10 ՄՅՃ.
Վեցամսեայ Կ. Պոլսոյ 4 ՄՅՃ.
Պաշտպան 5 ՄՅՃ.
Շաբաթական տոգը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար զատ տակարար թիւն կըլ-
այ :



ՀԱՅԱՍՏԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 29 ԱՊՐԵԼ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. Դրան և Ռուսաց մէջ բանակ-
ցութիւնները կը շարունակին, և կըս-
տին թէ առաջինը կառավարիչ եղեր որ
եթէ Ռուսը Կ. Պոլսոյ շրջակայներէն
քաշուին և Ազգականութեան ու կա-
րէնը պարպեն, ինքն ալ Շուսուի,
Վարնայի և Պաթումի բերդերը պիտի
պարպէ : Թօթիկէ պէն զօրավարը միշտ
ստիպողական կերպով կը պահանջէ
որ յիշեալ երեք բերդերը Ռուսաց
յանձնուին :

Իսկ Անգլիոյ և Ռուսիոյ մէջ բաց-
ուած բանակցութեանց գալով, թէ և
հեռագիրը կը ծանուցանեն թէ Լոնտ-
ոնի Ռուսական դեսպան Շուսուի
կոմսն Անգլիոյ առաջարկութիւնները
բեղբայրակա տարեր է, և իւր ու-
ղեւորութենէն հաշտարար լուծումը
կըստաւորի, այսու ամենայնիւ այս-
պիսի զրոյցներու չափէն աւելի կա-
րեւորութիւն չկրնար արուել, քանի
որ իրողութիւնները կեցած են : Մին-
չեւ հիմայ եղած բանակցութիւններն
անօգուտ եղան, և Եւրոպիոյ «պար-
կեշտ միջնորդը» Պ. Տը Պիսմարք
տեսնելով որ իւր հաշտարար ջանքն
յաջողութիւն չգտաւ, խրատ տուաւ
Ռուսիոյ և Անգլիոյ որ ուղղակի բա-
նակցին : Այսօր հեռագիրը Պ. Տը Պիս-
մարքի հիւանդութիւնը կը ծանուցա-
նեն, որ խիստ սրտաւրայի պատճառ-
մէ բանակցութեանց միջնորդէ բո-
լորովին ձեռնադադարուելու, թող-
լով որ եթէ երկու հակառակորդը
չկրնան համաձայնիլ, իրարու գլուխ
պատռեն, եթէ կողմնէ :

Քաղաքականութիւնը ճշգրիտ անց-
եալ տարուան վիճակին վերադարձած
կրնանք համարել, երբ Ռուսը-Ռու-
սական պատերազմէն առաջ դիւա-
նագէտը թուղթեր կը մտնէին և բա-
նակցութիւններ կընէին՝ առ երեւ-
ւոյթս Արեւելեան քրիստոնէից վիճա-
կը բարեօրէնու նպատակաւ, բայց
իրապէս ամեն մէկ տէրութիւն իւր
չափերն ու փառասիրութիւնը միայն
իրեն խորհրդական ընտրած էր, մինչ-
դեռ այն ժամանակուան երկու հա-
կառակորդը՝ թուրքիւն և Ռուսիան՝
մեծ փութով պատերազմական պատ-
րաստութիւններ կընէին : Հիմա դի-
ւանագիտութեան բոլոր ջանքն եր-
կու կէտի վրայ ամբողջութեամբ է : Անգ-
լիս կը պահանջէ որ Ռուսիան ի բաց
թողու Արեւելից մէջ փոփոխութիւն
մտնելու գաղափարն առանց 1856 ի
դաշնագրութիւնն ստորագրող տէ-
րութեանց հաւանութեան, և յայ-
տարարէ թէ թուրքիւն հետ կընք-
եալ դաշնագրութեանց հակառակ
Արեւելից մէջ փոփոխութիւն ընելու
իրաւունք չունի : Այսպիսի զինում

մը յայտարարութիւն չկարծուիր որ
Ռուսիա ընէ : Երկրորդ, որովհետեւ
երկու հակառակորդը՝ Անգլիան և
Ռուսիան՝ Կ. Պոլսոյ շրջակայներէն չը
քաշուած, հաշտութեան հիմնական
բանակցութեանց չպիտի սկսին, ուստի
այս մասին համաձայնութիւնը դոյա-
ցընելու ջանք եղաւ : Երկու հակա-
ռակորդը սկզբունքով կընդունին ի-
րենց զօրութիւնը Կ. Պոլսոյ շրջակայ-
ներէն հեռացնել, սակայն իրօք զի-
ջում չեն ընել : Անգլիան, ինչպէս
Պէրլինի լրագրէնէն մին կըսէ, պա-
տերազմ կողմէ, և Ռուսիա դայս դիւ-
նալով իւր հակառակորդը պատերազ-
մի մղելէ կ'դժուշանայ : Բայց երբ եր-
կու կողմէն պատերազմական պատ-
րաստութիւնները լրանան, ճիշդ ինչ-
պէս եղաւ անցեալ տարի, սկզբանց
վրայ բանակցութիւնը պիտի թողուն,
և հարկաւ վեճն այն ժամանակ աւելի
սաստիկ և կծու կերպարանք մը պի-
տի առնուլ, և թնդանթիւնը գոռալ
պիտի սկսին :

Բեղբայրակէն թայմը լրագրին
կը գրեն թէ Ռուսիա շատ մը զինում
ներ կընայ ընել : Պոլսոյ վրայ ինքե-
ր Կ. Պոլսոյ դեսպանախորհրդին մէջ
Լորտ Սալիզբըրի ըրած առաջար-
կութեան համաձայն կը լուծէ, Պեսա-
րաւորի փոքրիկ մէկ մասովը դո՛ւ իւր-
ւոյ, ուր բնակիչը բոլորովին Ռուս
են, Ասիոյ մէջ Պաթումի և Կարսէն
զատ ուրիշ տեղեր չառնուր և կը հա-
ւանի որ Եւրոպական Սինտիքա մը
կազմուելով թուրքիոյ հին և նոր պար-
տաւարաց իրաւունքը նկատարութեան
առնուլ : Բայց չկրնար զինանիլ որ ի-
րեն ազգային պատուոյն անարդանք
ըլլայ՝ իւր կնքած դաշնագրութիւնն
Եւրոպական դեսպանախորհրդոյ մը
ներկայացուելով : Սակայն Անգլիոյ
գլխավոր պահանջումն այս կէտս է, և
երբ երկու հակառակորդաց մէջ այս
պիսի հիմնական կէտի մը վրայ կարծ-
եաց մեծ տարբերութիւն մը կայ,
դժուարին է գրեթէ հաշտութեան
վրայ մեծ յոյսեր դնել : Անգլիա Այ-
սթէֆանսի դաշնագրութիւնը տէ-
րութեանց խորհրդին ներկայացնելու
պահանջման պէ տալու համար զին-
ւորական պատրաստութիւններն յա-
ռաջ կը տանի, բայց այս հաշտու-
թեան տարր մը չէ, քանզի եթէ Ռու-
սիա այս կէտին վրայ զինում չեն, Անգ-
լիոյ սպառնալիքէն վախճած պիտի
ըլլայ, որով իւր համբաւը պիտի վը-
տանգի :

Բ. Դրան և Աւստրիոյ մէջ ալ բա-
նակցութիւն կըլլար Պոսնիոյ պատըս-
պարեցող վերադարձին նկատմամբ :
Աւստրիա, ինչպէս յայտնի է, կողմէ
որ պատասպարեալը իւր զօրաց պաշա-
պանութեամբ վերադառնան, սակայն
Բ. Դուռն այս առաջարկութիւնը կը
մերժէր : Հիմայ կըսուի թէ Բ. Դուռն

ապահովեր է որ պատասպարեցող կե-
նացը բնաւ վտանգ չկայ : Աւստրիա
ալ կը հաւանի երկու առանց զինուո-
րական պաշտպանութեան դանոնք
ձանրել : Բ. Դուռն այնպիսի միջոց-
ներ ձեռք պիտի առնու, որք հարկ
չպիտի թողուն օտար զօրաց ուղեկ-
ցութեան և պաշտպանութեան : Գո-
հութեան արժանի է որ այս դժուա-
րութիւնը կը վերնայ, սակայն կը մնայ
տեսնել թէ արդեօք պատասպարեալը
որք մինչև հիմայ այսպիսի կարգադ-
րութիւն մը չեն ընդունիր, հիմայ
հաւանութիւն պիտի տա՞ն :

Հելլենական խնդիրն իւր ծանրու-
թիւնը կորուստանելու վրայ է : Թե-
սաղիոյ և Եպիրոսի ապստամբք քա-
նի մը պարտութիւններ կընցին, և
ընեց խումբերը ցրուել սկսած են :
Անգլիական կառավարութիւնն իւր
Աթէնքի դեսպանին միջոցաւ խոր-
հուրդ տուաւ ցունաստանի, որ հան-
դարտ նստի և ապստամբութիւննե-
րը քաջալերելէ ետ կենայ՝ եթէ կու-
ղէ Եւրոպիոյ համակրութիւնը գրա-
ւել, և իմաց տուաւ որ եթէ ապրս-
տամբութիւնը շարունակէ, Անգլիա
չպիտի պաշտպանէ հելլենական դա-
տը տէրութեանց խորհրդոյն առջև :
Կիրիտի մէջ ապստամբութիւնն աւե-
լի սաստիկ է, և իսլամ բնակիչը բեր-
դերը քաշուած են : Առ այսօր հելլե-
նական խնդիրը մեծ յառաջդիմու-
թիւն մը չըրաւ, թէ և Հելլենք ևս
արիւն թափեցին և զոհողութիւններ
ըրին : Մինչև հիմայ ամենէն չահա-
ւոր եղևոյ տարրը Սլավոններն է,
եթէ Անգլիա անոր յայտնանքները
ձեռքէն չկալէ :

Ռոստովի ըրանց և Արտաի դաշ-
տերուն մէջ Բոմբենիւրուն և Քրչակի-
ներուն ապստամբութիւնը կը շարու-
նակի, և դեռ լուր մը չկայ այն կող-
մերը զրկուած Ռուսո-թուրք յանձ-
նաժողովէն, որ ապստամբութիւնը
խաղաղելու պաշտոն ունի :

Կըսուի թէ իսլամ ապստամբք յայ-
տարարութիւն մը հրատարակեր են
Թրակիոյ Մակեդոնիոյ և Եպիրոսի
քրիստոնէայ (Յոյն) ժողովրդաց ուղ-
ղեալ որպէս զի հասարակաց հայ-
րենիքն հասարակաց թշնամոյն ձեռ-
քէն ազատելու համար զենք առնուն :

ՀՆՈՒԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Լոնտոն 9 մայիս.
Լրագիրը Ար. Միտիօրն Նորթօքսի
երկըրոծ յայտարարութեան կարեւորու-
թիւնը կը հակցնեն, որով յոյս կը յայտ-
նէր թէ դժուարութիւնը վերջանալու վը-
րայ են :
Թայմը կըսէ թէ Գաղղիա ալ Անգլիոյ
հետ չուղեր որ Պոլսոյ վրայ մինչև Եզէտ
կան ծովը ստորածի :

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրագրաց ճանրու-
ծ ալքը խմբագրութեան վրայ է :
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խմբագր-
— հնորէնի պիտի ուղղուի, զաւա-
թիս Աստաղծըլար ճատտակի թիւ
198, Նորս խան, Մասիսի գրասեն-
եակը :
Հանրու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :

Յիշեալ լրագրին հետեւեալ հեռագիրը
կը հրատարակէ Բեղրադուրէն :

« Կը յուսացուի որ Շուսուի կոմսն
ուղեւորութիւնն անստաշտութիւնները պի-
տի փարտաւ և բանակցութեանց ուժ-
տայ : »

Վիէննա 9 մայիս.
Փոքր սոսնձաւոր Ռոյթիլը լրագրին հե-
տեւեալ հեռագիրը կը հրատարակէ Քա-
թարոն երկուսն թուով :
« Երեք աւստրիական զրահաւոր ֆըր-
զաթօն հասան այսօր Քաթարօի բերան-
ներն և Մէլիքիէն առջև երկաթ նետե-
ցին : »

Վիէննա 9 մայիս.
Աւստրիոյ և Հունգարիոյ երեսփոխա-
նական ժողովոց մէջ կառավարութիւնն
այսօր վաթսուս միլիոն ֆլորին վարկին ի-
րացման առաջարկութիւնը ներկայացուց :
Աւստրիոյ երեսփոխանական ժողովին
մէջ Լեհացի երեսփոխանը հարցում ըրին
թէ կառավարութիւնը դիտարկութիւն
ունի՞ Պոսնիա զօրք մոցնելու, Ռուսիոյ
կամ ուրիշ տէրութեանց հետ համաձայ-
նութեամբ :

Լոնտոն 9 մայիս.
Երեսփոխանաց ժողովին մէջ ծանուց-
ւեցաւ թէ տաւոց կանխաւ խորհրդարա-
նին խմբակներ Զնդկաստանի զօրքերը
Մալթա բերել տալուն համար պարտա-
ւանաց առաջարկութիւն մը պիտի ներ-
կայացուի :

Փարիզ 9 մայիս.
Երեսփոխանաց ժողովին մէջ, արտա-
քին գործոց նախարար Պ. Վալիսիէ-
Սերկէտան խնդրոյն վիճակին վրայ Պոսն-
աթիւն երեսփոխան Պ. Տրէօլի հարց-
մանը պատասխանելով ըսաւ թէ բանակ-
ցութիւնը կը շարունակեն, և թէ կը յու-
սացուէր որ խաղաղութեան պիտի յան-
գին :

Փարիզ 9 մայիս.
Զրոյց կայ թէ կառավարութիւնը Մուէ-
լիի ջրանցքին գրաւմանը գէ՛մ պիտի բո-
ղոքէ :
Անգլիա Գաղղիա և Իտալիա Բուժա-
նիոյ հետ առեւտրական դաշնագրութիւն
մը կնքել յանձն չառին :
Հեռագիրը կը ծանուցանեն թէ Ռու-
սիա Անգլիոյ առաջարկութեանց հիմնա-
ւոր ըլլալը ճանչելով, Այսթէֆանսի
դաշնագրութիւնն ամբողջապէս տէրու-
թեանց խորհրդին ներկայացնելու հաճու-
թիւն տուեր է :

Փարիզ 10 մայիս.
Երեսփոխանաց ժողովին մէջ Պ. Միլիս
պահանջողական ծանուց թէ Զնդկական
զօրաց Մալթա զրկուելուն ի սրտէ հա-
ւանութիւն տուաւ թուրքերիմուս մը պի-
տի առաջարկէ :

Վիէննա 10 մայիս.
Երեսփոխանաց ժողովին մէջ Պ. Միլիս
պահանջողական ծանուց թէ Զնդկական
զօրաց Մալթա զրկուելուն ի սրտէ հա-
ւանութիւն տուաւ թուրքերիմուս մը պի-
տի առաջարկէ :

Վիէննա 10 մայիս.
Երեսփոխանաց ժողովին մէջ Պ. Միլիս
պահանջողական ծանուց թէ Զնդկական
զօրաց Մալթա զրկուելուն ի սրտէ հա-
ւանութիւն տուաւ թուրքերիմուս մը պի-
տի առաջարկէ :

Վիէննա 10 մայիս.
Երեսփոխանաց ժողովին մէջ Պ. Միլիս
պահանջողական ծանուց թէ Զնդկական
զօրաց Մալթա զրկուելուն ի սրտէ հա-
ւանութիւն տուաւ թուրքերիմուս մը պի-
տի առաջարկէ :

Վիէննա 10 մայիս.
Երեսփոխանաց ժողովին մէջ Պ. Միլիս
պահանջողական ծանուց թէ Զնդկական
զօրաց Մալթա զրկուելուն ի սրտէ հա-
ւանութիւն տուաւ թուրքերիմուս մը պի-
տի առաջարկէ :

Լոնդոն 10 մայիս		
Փոխ. 4865	8 7/16	
» 4869	8 1/8	
» 4871	35 1/2	
» 4872	13 3/4	
» 4873	8	
» Երկրորդ	56 3/8	
Անգլ. 4865	96	

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝
Երբեմն թերմոպոլիս կառավարիչ
Սայիտ փաշան թրհալայի կառավարիչ
անուանեցաւ :

Հինգշաբթի իրիկուն առաջին նա-
խարար վանքի Սատրապ փաշան , ա-
ռաքին գործոց նախարար վանքի
Սաֆվէթ փաշան և այլ քանի մը նա-
խարարք երևորդի պալատն երթալով
իրիկուն ճաշն հոն ըրին :

Պատրիարք իրագործող ժո-
ղովրդեան դէմ խիստ կծու և նա-
խատական լինող գործածելուն հա-
մար սպառնալից ազդարարութիւն
մ'ստացաւ Բ. Դաւեն :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ե Ս Ն Ա Մ Ը Ո Ւ Մ Ո Ւ Մ Ի Է

28 ապրիլ ուրբաթ իրիկուն	9, 6
29 ապրիլ չորակ ռաւաթ	
բացուեցաւ	9.10
ժամ 6 ին	9.12
Բուսնիկի երկարութիւն	Ֆր. 31 50
Թղթադրամ	Լր. 278

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԱՅՈՒԹՅՈՒՆ

Կ. Պոլս 28 Ապրիլ

Ստիւտիէ Դէնքերայի բաժ. Անգլ. լր.	2.38
» Փոխանակութեան	2.
Կ. Պոլսի Պանքային	3.12
Քրէտի Դէնքերայի	2.11
Քրէտի Օսթրո-թուրք	—
Փոխ. 1863	Ֆր. 41
» 1865	» 42
» 1869	» 39
» 1872	» 14
» 1873	» 37 50
Թրամուայ	Օսթ. լր. 4 10

ԸՆԹԱՅՔ ԳՐԱՄՈՒՆ

28 Ապրիլ

Անգլ. լր.	առ.	109 3
Նաթիոն ոսկի	»	87
Իմպերիալ Ռուս	»	88 38
Գերման	»	50 30
Հինգ ֆրանք	»	—
Հինգ ցոն	»	120 20
Պղինձ	»	170 20

ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅՈՑ ՆԱԽՈՐԴ ՊԱՏՐԻԱՐԿՆ
Ի ՄԱՆՁԼՈՒԹՅՈՒՆ

Սոյն մակագրով Մանչեսթրի անգ-
ղիական Մանչեսթրի կարտին լրագ-
րին մայիս 2 թուով թերթին մէջ հե-
տեւեալ տեղեկութիւնը կը տեսնենք
հրատարակուած :

« Հայոց նախորդ Պատրիարք Խը-
րմեան Արքեպիսկոպոսը Զատիկն ա-
ռաջի օրն հանգիստաւոր պատարագ
մատոյց քաղաքիս Հայոց եկեղեցւոյն
մէջ , և իւր քարոզին բնաբան ընտ-
րեց Եղեկեղի մարգարէութեան
37րդ գլխոյն երրորդ համարն . « Եւ
« ասէ ցիս . որդի՛ մարդոյ , իցէ՛ թէ
« կենդանի լինիցին ոսկերքդ այդու-
« քիկ , եւ ասեմ , տէ՛ր , տէ՛ր , դու
« գիտես զայդ » : Քարոզիչն Հայաս-
տանի ներկայ վիճակն ակնարկելով՝
ըսաւ թէ Հայաստանի ներկայ վիճա-
կը՝ դարերէ 'ի վեր կրած հարստա-

հարութեամբ , բռնութեամբ և յո-
ռի վարչութեամբ «չոր ոսկերեղով լի
ձորին նման» է : Սակայն Հայք ,
խաղաղաբէր , ժրջան և համբերող
ըլլալով հանդերձ , ոչ բարգաւաճում
ունենցած են , ոչ կենաց ապահովու-
թիւն , ոչ ալ անդորր կեանք : Բե-
թեզդայի անդամալուծին պէս Հայը
գլխաւոր ձեռքի մը պէտք ունէր
ազատութեան համար : Եթէ Հայք ի-
րենց հաւատքին վրայ հաստատ մը
նան և Աստուծոյ ապաւինին , ըսաւ ,
ազատութեան օրը հեռի չէ : Ուրա-
խութիւն յայտնեց ըսելով թէ որչափ
որ իւր ծանօթութիւնը քիչ էր Եւ-
րոպական ազգաց վրայ , Անգլիոյ մէջ
աւելի համակրութիւն տեսաւ Բոս-
նիոյ՝ քան թէ ուրիշ տեղեր : Յաւե-
ցաւ որ Հայք այսչափ քիչ ճանչուած
էին Եւրոպայի մէջ . սակայն վստահ
էր որ եթէ Եւրոպա Հայոց դատը նը-
կատողութեան առնու , չկայ աղբ մը
որ մարդկային կարեկցութեան այն-
չափ արժանի ըլլար : Համայն Եւրո-
պա գիտէ թէ Հայերը ծայրայեղ պա-
հանջութեամբ չունին . անոնց պահան-
ջածը մի միայն խաղաղութիւն , խղ-
ճի ազատութիւն և բարեւոյց կառա-
վարութիւն մ'է : Լաւ կ'զգար որ
արքայութիւնն անոնցմէ չպիտի զը-
լացուէր , որովհետեւ Եւրոպայի հա-
մակրութիւնն ստանալու համար Հա-
յոց դատէն լաւագոյն և աւելի ար-
ժանաւոր դատ մը չկար երբեք :

« Չվարանեցաւ ըսել թէ Եւրոպա ,
և մասնաւորապէս Անգլիա և Ռու-
սիա , իբրեւ քրիստոնեայ և իբրեւ
ամենէն աւելի շահ ունեցող տէրու-
թիւնք , ետ չպիտի կենային իրենց
պարտականութիւնն ա՛յն կերպիւ
կատարելէ , որով թէ՛ իրենց մաս-
նաւոր շահերն ապահովին և թէ Հա-
յոց բարօրութիւնը , Հայոց՝ որք Ա-
սիոյ մէջ քաղաքակրթութեան ուս-
կրից ըլլալու օգտմանեալ են :

« Երեւելաթի օրն Հայոց նախորդ
Պատրիարք Մանչեսթրի եպիսկո-
պոսին այցելութիւն տուաւ մայր ե-
կեղեցւոյ եպիսկոպոսարանին մէջ ,
ուր հետեւեալ ուղերձը կարդացուե-
ցաւ .

« Թուրքիոյ Հայոց նախորդ Ս.
Պատրիարքն ուրախ է որ իւր Ման-
չեսթրի գալէն օգուտ քաղելով Ձեզ
ներկայանալու պատիւ կունենայ ,
Ձեզ , որոյ քրիստոնէական առաքի-
նութիւններն և իմաստուն հայրենա-
սիրութիւնը ծանօթ են Արեւելից մէջ
Յանուն Հայաստանեայց նախկին ե-
կեղեցւոյ , Նորին Սրբազնութիւնը
պատիւ ունի յանձն Ձեր ուղղունը
Անգլիոյ եկեղեցին և մեծ ու ազատ
Անգլիոյ համայն քրիստոնէայեան ,
Անգլիոյ՝ որոյ վրայ Հայաստանի քը-
րիստոնեայք երկար ժամանակէ 'ի
վեր համակրութիւն և խորին սքան-
չանաց զգացումներ կը տածեն : Նո-
րին Սրբազնութիւնն Անգլիա եկած
է՝ Մեծին Բրիտանիոյ կառավարու-
թեան և Ժողովրդէն արգարութիւն
և պաշտպանութիւն խնդրելու , ո-
րովհետեւ Օսմանեան Հայաստանի
քրիստոնեայք՝ ոչ-քրիստոնեայ ցե-
ղերու մոլեռանդութենէն անխնայ
կը չարչարին : Կը յուսայ որ Անգլիոյ
կառավարութիւնը նկատողութեան
պիտի առնու Հայոց ներկայ վիճակը
կը խնդրէ նաեւ Ձեր Ազնուութենէն
որ ձեր ազգեցութիւնն 'ի գործ դը-
նէք յօգնութիւն Հայոց դատին , որ
Ասիոյ մէջ քրիստոնեայ քաղաքակր-
թեան դատն է :

« Մանչեսթրի եպիսկոպոսը սի-
րալիւ խօսքերով պատասխանեց , խը-
րմեան արքեպիսկոպոսն եկեղեցւոյ
պաշտաման ալ ներկայ գտնուեցաւ .
յետոյ Մանչեսթրի Հայ վարդապե-
տին , իւր քարոզարարին (Պ. Չէրազ)

և քանի մը գլխաւոր Հայ վաճառա-
կանաց հետ քաղաքիս Յոյն հասա-
րակութեան փոխադարձ այցելու-
թիւն տուաւ և մեծարանք ընդուն-
ուեցաւ Պ. Չիլմանայի տունն : Ան-
կէց Յունաց եկեղեցին գնացին , ուր
մեծ բաղմունքիւն կ'ուպասէր : Նորին
Սրբազնութիւնն օրհնութիւն տուաւ ,
և Հայոց վարդապետը քրիստոնէական
եղբայրութեան հրաւէր կարդալէն
վերջը , Նորին Սրբազնութիւնն առ-
ինքն ուղղեալ ուղերձի մը պատաս-
խանելով հայրական և սիրալիւ ա-
տենաբանութիւն մ'ըրաւ , և յոր-
դորեց Յոյներն ու Հայերն որ աւելի
սերտ կերպիւ միանան , որովհետեւ
իրենց դատը զօրութեամբ մի և նոյն
էր :

« Ահաւասիկ Յոյն հասարակու-
թեան ուղերձը .

« Ան Նորին բարձրութիւն Դեր-
Տ . Մկրտիչ Խրիմեան , Պատրիարք
Հայոց , և այլն , և այլն :

« Սրբազան Տէր .

« Իբր հելլեն՝ ազգային պարծա-
նօք և քրիստոնէական ուրախու-
թեամբ պատիւ ունինք ձեր գալուս-
տըն ուղղունը , և յանուն Մանչես-
թրի Հելլենական հասարակութեան
մեր խնդակցութիւնները Ձեր բարձ-
րութեան մատուցանելու , Ձեզ՝ որ
գլխիւ էք քրիստոնեայ հասարակու-
թեան մ'և վիճակակից ազգութեան
մը , որ միշտ ներդաշնակութեամբ
և քրիստոնէական սիրով կենակցած
է Արեւելեան Հելլենական ուղղափառ
եկեղեցւոյն հետ , և որ աւետարա-
նական համբերութեամբ երկար ժա-
մանակ նոյն եկեղեցւոյն հետ անտա-
նելի լուծի մ'և անիրաւ հայածման
մը բոլոր խոտութիւններուն և տա-
ռապանաց դիմացած է : Պատիւ ու-
նինք Ձեր բարձրութիւնը շնորհա-
ւորելու Ձեր ստանձնած վսեմ պաշ-
տօնին համար , որ նպատակ ունի
Ձեր երկրին ազգային իրաւանց վե-
րահաստատութիւնը իբրեւ Հելլենա-
ցիք , և իբրեւ առաքելական աւան-
դութեանց մէջ Հայ ազգին եղբարք ,
որոյ հետ սերտիւ կապուած ենք կը-
րօնական աւանդութեամբ և ազգա-
յին տառապանօք , կը վրեժանք
մեր գոհունակութիւնն յայտնել Ձեր
բարձրութեան այս երկիրն ըրած ու-
ղեւորութեան նպատակին համար , և
մեր ամենաշնորհաւոր ըրձանքն ար-
տայայտել այդ նուիրական պաշտօ-
նին յաջողութեան համար : »

« Պ. Չէրազ հետեւեալ պատաս-
խանը կարդաց .

« Գերապատիւ Ս. հայր և պատ-
ւարժան Տեառք .

« Թուրքիոյ Հայոց նախորդ Ս.
Պատրիարքն ինձ կը յանձնէ յայտ-
նել ձեզ թէ՛ սրչափ խոր ազգեցու-
թիւն մ'ըրին իւր սրտին՝ այդ հա-
մակրութեան և քրիստոնէական սի-
րոյ զգացումները , զորս յայտնեցիք
Հոյ եկեղեցւոյն և Ժողովրդեան վը-
րայ , Նորին Սրբազնութիւնն երջա-
նիկ կը համարի զինքն՝ ազատ Անգ-
լիոյ մէջ մի և նոյն եկեղեցւոյ և մի
և նոյն հայրենեաց զաւակները դը-
նելուն համար : Յունաց և Հայոց
դատն այսօր մի և նոյն է . որովհետեւ
թուրքիոյ ոչ-Սլաւ քրիստոնէից իրա-
ւունքները կը ներկայացնեն : Այս
երկու Ժողովուրդք պարտին ուրե-
մէն ուրիշ ամեն ժամանակներէ ա-
ւելի միանալ անիրաւութեան ու բար-
բարոյութեան յառաջդիմութիւնն
արգիլելու համար : Նորին Սրբազ-
նութիւնն 'ի սրտէ շնորհակալ կըլլայ
ձեզ՝ իւր պաշտօնին յաջողութեանը
համար ձեր ըրած ջանք՝ բարեմաղ-
թութեանց պատճառաւ , և կը յանձ-

նարարէ ինձ նուե՛ ձեր մեծափառ ազ-
գին բարգաւաճման համար իւր սր-
տադին բարեմաղթութիւններն յայտ-
նել ձեզ : »

Բալուէն Պատրիարքարան եկած
հեռագիր մը՝ տեղոյն Հայ Ժողովուր-
դոց իրենց արտերը մշակելու խն-
անկարող ըլլալու աստիճան չքառ-
ութեան մէջ ինկած ըլլալը ծանու-
ցանելով կը յայտնէ թէ տեղական
խնամութեան պահանջած բռնի փո-
խառութիւնը վճարելու բնաւ կարո-
ղութիւն չունին , հետեւաբար կը
խնդրէ որ Պատրիարքարան իրենց
այս վիճակին ճար մը գտնէ :

Տրապիզոնէն մայիս 3 թուով Լէ-
վրնթ Հէրըլտի ուղղեալ նամակի մը
մէջ հետեւեալ տխուր տողերը կըլիար-
դանք .

« Գոհ եղայ տեսնելով ձեր էջե-
րուն մէջ խնուսի կողմերը՝ ֆիւրդե-
րուն գործած ասպատակութեանց
վրայ Հայոց տեղեկագիրին հրատարա-
կութիւնը : Կը թուէր թէ Թուրքիոյ
քաղաքականութեան նպատակն էր
խնդ՝ քրիստոնեայ Ժողովուրդներն
ստիպել որ իրենց կեանքն ազատե-
լու համար Ռուսիա փախչին : Դրժ-
բաղդ գիւղացիք մէկ կողմէ Ռու-
սաց զօրքերէն , յորոց ոմանք բերտ
և բարբարոս են , միւս կողմէ՛ ֆիւր-
դերէն , որոց ոճրագործութիւննե-
րը ծանօթ են , և վերջապէս Թուրք
զօրականներէն , որք դողնալու և կո-
ղոպելու մասին ֆիւրդերէն վար
չեն մնար , կեղեքուելով փոշի դար-
ձած են : Վերջին ժամանակներս
Թուրք զօրականաց ձեռքն ինկան ,
զորս նախ իբրեւ ազատարար ուղղու-
նեցին , բայց յետոյ դժբաղդաբար
տեսան որ հարստահարիչ էին , այն-
պէս որ խնդժ Ժողովուրդն ազադա-
կել սկսաւ թէ « Ազատեցէ՛ք մեզ
մեր ազատարարներուն ձեռքէն : »

« Կը լսեմ թէ՛ Բիլիկ մէջ սարսա-
փելի թշուառութիւն և մինչև իսկ
սովի վախ կայ : »



Գաւառ սրտի կը ծանուցանենք
թէ ազգիս երեւելի և պատուաւոր
վաճառականներէն Գալփաճեան Մե-
ծապատիւ Գալփաճեան էֆէնդիան , որ
բաւական ժամանակէ 'ի վեր հիւան-
դանալով անկողնոյ կը ծառայէր , բը-
ժըլիաց ամեն ջանից հակառակ չը
կրնար ըլլալ , հինգշաբթիէն ուր-
բաթ լուսնալու գիշերը ժամ 3ին իւր
մահականացուն կ'ընէր 'ի հասակի 65
ամաց , 'ի խոր սուգ ընկղմելով իւր ազ-
նուափայլ ընտանիքն և բաղմութիւ
բարեկամներն :

Յուզարկաւորութիւնը պիտի կա-
տարուի վաղը՝ կիրակի՝ Գալփաճեանի
Ս. Թափաւոր եկեղեցին , ուր Պատ-
րիարքական տեղապահ Մխիթարեան
Գեր. Խորէն սրբազան ժամ 3ին Ս.
Պատրիարք պիտի մատուցանէ վասն
հոգւոյ հանգուցելոյն , և յետոյ
մարմինը շողենալով Գալփաճեան փո-
խադրուելով Ս. Լուսաւորիչ եկեղե-
ցին պիտի թաղուի :

Հանգուցեալ Գալփաճեան էֆէն-
տին նշանաւոր էր իւր ուղղութեամբ ,
բարեկալուածութեամբ , ազգաբնու-
թեամբ և մանաւանդ ազնուասը-
տութեամբ , որով իրեն գիմոյ ազ-
քատներն ու կարօտեալներն անմխի-
թար չէր թողուր , մէկ խօսքով , բա-

